

ՔՆԻՐ ԵՒ ԴՈՒ

Ահ, թանձը ծուխ փշելով դէպի երկինք՝ դնացքը
սլանում էր տնքոցով ու որոտով։ Նա կարծես հեկիչե
փախչում էր վերահաս, ահաւոր վտանգից, բայց տեղ-
տեղ կանգ էր առնում դադրած, մի փոքր հանգստա-
նում և կրկին տարւում նոյն մոլեգին ընթացքով։

Եւ այստեղ՝ հեռւում թափանցիկ մշուշի միջից կա-
պուտին էին տալիս հսկայ լեռները հպարտ ու անշարժ։
Թեթև, սպիտակ ամպերը մեզմիւ քսւում էին նը-
նրանց գորշ, խորշումած կիրճերին, համրուրում և փայ-
փայում էին նրանց՝ ասես ապաստան խնդրելով, ապա
յուսախար՝ տարւում էին հեռւու-հեռւ, կամ լուծում
ու չքանում երկնքի անհունութեան մէջ։ Խոկ լեռները
նայում էին իրանց ոտների տակից սլացող գնացքին,
կարծես ճգնում էին հասկանալ, թէ ուր է գնում նա,
ինչու է աղմկում, ինչ է փնտրում, և ըմբռնելու իրանց
անզօրութեան մէջ՝ նրանք մռայլում էին, իրանց կա-
տարները ծրարում սև ամպերով և ընկղմում խոր մըտ-
քերի մէջ։

Աւելի հեռուն ծովս էր տարածւում անկնճիռ ու
անդորր, փոթորկից յոգնած ու դժգոյն ծովը։ Երեկոյ
էր, օրուայ այն ժամը, երբ դեռ խաւար չէ, բայց լոյսը
մեզմիւ մթագնում է լայն ստուերների տակ, և ընու-
թիւնը անուրջների մէջ՝ ասես նիրհում է աչքերը բաց։

Գնացքի առաջին կարգում յատակին դրուած պաշտոսակի վրայ կանգնած էր մի երեխայ պատուհանի առաջ և լուս դիտում էր դուրսը, ուր ամեն ինչ նրան հետաքրքրում ու գրաւում էր: Նու տեսնում էր, թէ ինչ պէս տերեախիտ ծառերը տատանելով գլուխները՝ իրար յետեից փախչում են ու փախչում, նրանց սաղարթների տակից աեղտեղսկին են տալիս փոքրիկ խըրճիթների տանիքները, ապա կորչում համատարած կանաչի մէջ: Երբեմն գնացքը թռչում էր գետերի վրայով, և երեխան մի քանի ակնթարթ հիացմունքով դիտում էր լեռնային ջրերի փրփրալից, ոլորապտոյտ ընթացքը ու լուս նրանց կատաղի, յօւսահատական ոռնոցը...

Եւ այդ բոլորը քաղցր երազ էր թւում երեխային, երազի նման անորոշ, անձեւ, անըմբռնելի ու շարժուն, հրաշքներով լի կախաղական մի աշխարհ: Երբ մարդիկ էին պատահում, երեխան անդիմադրելի պահանջ էր զգում խօսել նրանց հետ, ու նրա մանկական սիրոր խիստ դառնանում էր, որ չի կարող մօտենալ այդ վատ հագնուած, բարի գէմքերով մարդկանց: Եւ գլուխը հանելով պատուհանից՝ նա հետեւում էր նրանց, մինչեւ որ անհետանում էին ծառերի, թփերի յետեւում:

Մօտ ութ տարեկան այդ երեխան փոքրիկ փխրուն մարմին ունէր, նեղ կուրծք, նեղ ճակատ ու անկանոն գիմագծեր: Այդ խղճալի արտաքինը շատ աւելի տգեղ կը լինէր, եթէ չը լինէին նրա երկու խոշոր, պարզ, վառվառն աչքերը, որոնք մեղմացնում էին նրա գէմքի անկանոնութիւնն ու մարդու ուշադրութիւնն գրաւում: Երբ նա խօսում էր, ճակատի բարակ կաշին շարունակ ձգձգում էր ու ծալւում, իսկ պարզ աչքերը մժնում էին, խորանում ու անշարժանում, թւում էր, թէ նա անհունն է դիտում և տեսնում է այն, ինչ որ չեն տեսնում ուրիշները:

«Մայրիկ», ասաց նա յանկարծ սթափուելով, մը տածկոտ, թախծալի շեշտով, խարտեաշ փոքրիկ գլուխը

դարձնելով մօրը, որ լուռ պառկած էր ու ինքնամփոփ մտածում:

«Մայրիկ, տես, ի՞նչպէս լաւ է այնտեղ, խոտի մէջ, դաշտում, ծառերի տակ»... Եւ երեխան մտածում էր, որ մարդիկ, որոնք այնտեղ ապրում են, բաղդաւոր են, և ափսոսում էր, որ ինքն այնտեղ չէ ապրում... «Իսկ այն լեռները, ի՞նչ բարձր են... ինչու եսթեեր չ'ունեմ, որ թռչէի այնտեղ լեռների գլուխը... Մայրիկ, քաղաքը վատ է, այնտեղ ծառեր չը կան... և օդը փոշ շու է»...

—Այս, հոգեեակո, ասաց մայրը և ծոյլ շարժումով շփեց երեխայի վտիտ, գունատ այտերը:

Դա մի սիրուն, բարձրահասակ կին էր, փարթամ մարմնով, ճերմակ բարակ պարանոցով, որ կարծես յըզկուած մարմարից լինէր: Նրա շարժումների մէջ կար ինչոր տարփալից յոգնածութիւն, թւում էր, թէ նա ձանձրացել է կեանքից, գագրել ապրելուց: Կեռ, գիշատիչ քիթը, կրքոտ, բոցոտ աչքերը, շրթունքները նրան վայրի թռչնի նմանութիւն էին տալիս, որ նստած բըլլի գագաթին՝ որսի է սպասում... նրա սիրուն դէմքըն արտայայտում էր սիրելու, և սիրուելու, համբուրելու և համբուրուելու անյագ տենչ:

«Մայրիկ, տես ի՞նչ սիրուն է ծովը»... ասաց երեխան՝ մօտենալով միւս պատուհանին:

—Այս, մեքենայաբար պատասխանեց մայրն ուշքի գալով: Նա տարուած էր իր առանձին մտքերով...

Այժմ նա ազատ էր ու մենակ, որովհետեւ չը կայ ամուսինը, որ ամեն տեղ, տանը, գուլսը, անկողնում, երեկոյթներում, ամեն տեղ, ամեն տեղ իր հետ էր: Եւ կնոջ աչքին ներկայացաւ ամուսնու ճաղատ, տգեղ գըլուխը, որից նա զգուել էր: Կինն ինքը չը գիտէր ինչու, բայց նրան միշտ թւում էր, որ ամուսնու ճաղատից ինչոր սառնութիւն է փշում, և այդ նա զգում էր մասնաւանդ, երբ ամուսինը գրկում էր նրան ու համբուրում իր չոր, զազրելի շրթունքներով: Բայց այժմ ազատ

էր նա իր ամուսնու տաղտկալի փաղաքշանքներից... Եւ կինն սկսեց երազել... ինքն աղատ է, ամուսինը չը կար, և այժմ կարող է սիրել, ում որ ուզի... Գնում է այս-տեղ, ուր սիրուն, բարձրահասակ, գրաւիչ տղամարդիկ կան, ուր անշուշա մէկը նրանցից կը սիրէ իրան, իր պաշտելին կը դառնայ...

«Մայրիկ, կրկին ընդհատեց երեխան մօր մտքերը, «տես, այստեղ ծովում նաւակը ի՞նչ սիրուն է»...և նա ցոյց տուեց ծովի դժգոյն, անափ մակերեսոյթին թափառական մենաւոր սպիտակ առագաստը։ Երեխան նաւահնձում էր այն մարդկանց, որոնք ապրում են ծովափում, փոքրիկ տնակում ու դիւրութիւն ունեն մակոյկով զբօսնել ծովի անեղրութեան մէջ։ Մայրը շարունակում էր մտածել. նա անպատճամ թողեց որդուն։

Մութը՝ քանի գնում, թանձրանում էր ու պարուրում շրջակայքը։ Երբեմն երեսում էին ինչոր ճրագներ, որոնք խաւարի մէջ թարթում էին ու սստոստելով հեռանում, կորչում։ Բնութիւնը ընկղմուել էր խոր քնի մէջ։ միայն գնացքն էր, որ անհանդիսա հրէշի պէս դղրդում էր, տնքում և քուն ու դադար չ'ունէր։ Եւ դիշերն իր խաւարի ծանրութեամբ անկարող էր խլացընել նրա որոտը՝ նիրհող աշխարհին խաղաղութիւն տալու համար։

Բայց ահա հնչուեց սուլոցը և չոր ելեէջերով տարածուեց մեռած շրջակայքի վրայ, ահա գնացքը դանդաղեցրեց իր ընթացքը և հեալով ու ցնցուելով կանգառաւ։ Ինչոր շարժուն ստուերներ, սե, սպիտակ, մեծ, փոքր, իրար անցան, խառնուեցին, մէկ-մէկի տրորերով, հրհրելով խմբուեցին գնացքի առաջ. ոմանք շտապում են մտնել, միւսները նոյնպէս շտապելով դուրս են դալիս։

Երեխան մօտեցաւ պատուհանին ու սկսեց դիտել։ Վագոնից ոչ այնքան հեռու պառկած էր մի մեծ նիւ-

հար շուն, և երկար լեզուով լիզում էր իր ոսկրոտ մարշինը։ Երեխան սիրում էր կենդանիներին։ Նա հանեց զամբիւղից հացի մի մեծ կտոր ու շպրտեց շանը։ Կենդանին վեր թռաւ տեղից, մօտեցաւ հացին ու բերանն առաւ։ Յանկարծ մի մարդ, որ մինչև այդ մենակ կանդած էր պատի ստուերում և անորոշ հայեացքով նայում էր չորս կողմը, արագ-արագ, բայց անյապաղ քայլերով՝ ինչոր մրթմրթալով քթի տակը՝ մօտեցաւ շանը, դրկեց նրա գլուխը և կոկորդը սեղմելով՝ խլեց հացի կտորը, ապա մի քանի քայլ հեռանալով սկսեց ուտել Քաղցից այրուսղ, անկենդան աչքերը սեեռած վագոնի պատին՝ նա ուտում էր՝ մոռացա ծամեն ինչ։ Մարդիկ աղմկում էին նրա շուրջը, ծիծաղում, անցնում էին մօտովը, նոյնիսկ բոթում նրան, բայց նա ասես չէր զգում այդ բոլորը և լուռ ու մունջ շարունակում էր իր գեղին խոշոր ատամներով կրծել հացի կը տորը։

Բարձրահասակ, սիհար, կիսամերկ այդ մարդն իր երկար ձեռներով, ճակատին փոռուած իր խռիւ մազերով, չուած, այրուող աչքերով, սարսափ էր աղդում նայողին։ Նա կարծես մի ուրիշ աշխարհից եկած ուրուական լինէր։

Երեխան առուշ կտրած, սարսափից քարացած, քաղցածի այդ խեագուայ հայեացքից անձայն կանդնած էր և վախենում էր տեղիցը շարժուել։ Մայրական խընամբի ներքոյ, անհոգ փափկութեան մէջ մեծացած՝ նադեռ ըլ գիտէր ինչ ասել է քաղց ու խեղճութիւն։ Դարձեալ հնչեց սուլոցը, և գնացքը նախ դանդաղ, ապա աւելի և աւելի արագ առաջ անցաւ և միսուեց խաւարի մէջ, այն խեղդող պատկերից հեռու։ Երեխան թեթևութիւն զգաց և քաշուելով անկիւնը՝ նստեց ու սկսեց մտածել։ Նրա փոքրիկ, բորբոքուած ուզեղը գործում էր տենդոտ ցաւով. «Ես կուշտ եմ, մայրս... հայրս... կուշտ ենս... մենք ամենքս... կուշտ ենք... մենք երբէք քաղցած չենք լինում, բայց այն մարդը... նա չոկամբել, 1903.

քաղցած է։ Նրա երեխաներն ու քոյրերը նոյնպէս... քաղցած են, հաց չ'ունեն ուտելու... ինչու...» և կանգնած այդ անհասկանալի հարցի առաջ՝ նա տանջւում էր, ճգնելով իր անզօր մանկական մտքով հասկանալ իրողութիւնը։

«Մայրիկ—ասաց նա փշրուած, կոկծալի ձայնով.— ինչու նա քաղցած է»... և նրա ճակատի կաշին սկսեց ծալուել ու ձգձգուել, իսկ աչքերը մժնեցին, բիրերը խորացան ու անշարժացան։ Բայց մայրը չէր լսում, որովհետև կուշտ էր, քնած էր, և նրա փարթամ բարձր կուրծքը մերթ բարձրանում էր, մերթ ցածրանում, հեշտալից ժպիտը շրթունքին։

Երեխան լռեց։ Նա դեռ զգում էր քաղցած մարդու հայեացքի սուր խայթը և դզրդացող վագոնի անկիւնում մենակ ու լուռ՝ մտածում էր նրա մասին։ Մըտաբերելով նրա սառն, խելագար հայեացքը, երեխան և՛ վախենում էր, և խղճում։ Եւ զգացմունքների այդ անծանօթ խառնուրդի ճնշումից նրա մանկական տպաւորուող սիրտը մութ կերպով գուշակում էր, որ կայ մի ինչո՞ւ սարսափելի, անհասկանալի բան իրանցից հեռու...»

Յանկարծ նա վեր թռաւ տեղից և գունատուած, չռած աչքերով՝ նետուեց մօրը գիրկը։

«Մայրիկ, վախենում եմ, նա գալի՛ս է այստեղ»...

Մայրը զարթնեց։

—Ո՞վ։

«Քաղցածը, պատուհանից նայում է...»

Մայրը նստեց քնաթաթախ աչքերով, նայեց չորս կողմը և տեսնելով որ ոչ ոք կայ վագոնում, ասաց գժգոհութեամբ։

—Ի՞նչ ես քունս խանդարում... ապա պառկելով իր տեղում աւելացրեց քնկոտ ձայնով։

—Քնիր և գու...»

Բայց երեխան չէր կարողանում քնել, նա տեսնում էր քաղցածի ուրուականը, տանջւում էր՝ աչքերը խաւարին յառած։

— «Մայրիկ, դալիս է»...

— Քնիր, քնիր և գու, կրկնում էր մայրը քնի միջից,
աչքերը կիսախուփ, երերուելով փափուկ բազմոցի վրայ-
իսկ մոայլ, լուռ գիշերը ծանր էր և խեղդող, և գը-
նացքը շարունակում էր տարուել խաւարի մէջ խելա-
գար թափով:

ՆԻԿ. ԱՀԵՏԵՍՆ